



## 1. Գործի դատավարական նախապատմությունը

<<Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո>> իրավաբանական անձանց միությունը /այսուհետ՝ նաև Բյուրո/ 2013 թվականի ապրիլի 12-ին հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան/ ընդդեմ Ապրես Մանթուրի Մարտիրոսյանի և <<Մուրադիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ նաև <<Մուրադիկ> ՍՊԸ/՝ 1.129.000 /մեկ միլիոն հարյուր քսանինը հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու մասին:

<<Մուրադիկ>> ՍՊԸ և Ա.Մարտիրոսյանը 2013 թվականի մայիսի 15-ին ներկայացրել են հակընդդեմ հայց՝ Բյուրոյի գործադիր տնօրեն Ա.Վարդիկյանի 2012 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 12/243Ա հրամանը և ԼՂՀ ոստիկանության ՃՈՎ ՃՊԾ թիվ 2 սպայական դասակի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Լ.Ասրյանի 26.09.2012թ. թիվ 112921 արձանագրային որոշումը վերացնելու մասին:

Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի մայիսի 17-ի որոշմամբ Բյուրոյի դեմ ներկայացված մասով հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ ճանապարհային ոստիկանության մասով՝ վերադարձվել:

Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի մայիսի 18-ի որոշմամբ ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը, Ռոբերտ Միքայելի Բաղդասարյանը և Էդգար Լավրենտի Ղալայանը գործով ներգրավվել են որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ հայցվորի կողմում:

Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 6-ի որոշմամբ նշանակվել է դատաավտոտեխնիկական ու դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, և գործի քննությունը հետաձգվել է մինչև փորձագետի եզրակացությունը ստանալը:

Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի որոշմամբ քաղաքացիական գործի քննությունը վերսկսվել է և նշանակվել դատական քննության:

Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 28-ի որոշմամբ բավարարվել է փորձագետ Է.Իսրայելյանի միջնորդությունը և նրան տրամադրվել լրացուցիչ տեղեկություններ:

Առաջին աստիճանի դատարանի /դատավոր՝ Կ.Բեգլարյան/ 2013 թվականի հուլիսի 31-ի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են մասնակիորեն. Ա.Մարտիրոսյանից և <<Մուրադիկ>> ՍՊԸ-ից հոգուտ <<Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո>> իրավաբանական անձանց միության բռնագանձվել է 388.250 ՀՀ դրամ:

Սկզբնական հայցվորի և երրորդ անձ Ռ.Բաղդասարյանի բերած վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ /նախագահող՝ Հ.Խաչատրյան, դատավորներ՝ Հ.Աբրահամյան, Կ.Սաղյան/ իր՝ 2013 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ Առաջին աստիճանի դատարանի վճիռն ամբողջությամբ բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Առաջին աստիճանի դատարանի /դատավոր՝ Ս.Գրիգորյան/ 2014 թվականի օգոստոսի 28-ի վճռով սկզբնական հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Նշված վճռի դեմ 2014 թվականի հոկտեմբերի 3-ին սկզբնական հայցվորի ներկայացուցիչ Մ.Բաբաջանյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի /նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան, դատավորներ՝ Հ.Աբրահամյան, Կ.Սաղյան/ 2014 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ բավարարվել է. Առաջին աստիճանի

դատարանի 2014 թվականի օգոստոսի 28-ի վճիռն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան լրիվ ծավալով նոր քննության:

Առաջին աստյանի դատարանի /դատավոր Ռ.Ջհանգիրյան/ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի վճռով սկզբնական հայցը բավարարվել է մասնակի. Ապրես Մարտիրոսյանից և <<Մուրադիկ>> ՍՊԸ-ից հոգուտ <<Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո>> իրավաբանական անձանց միության համապարտության կարգով բռնագանձվել է 776.500 ՀՀ դրամ՝ որպես հատուցված վնասի գումար, մնացած մասով՝ հայցը մերժվել է: Հակընդդեմ հայցի մասով՝ գործի վարույթը կարճվել է: Պատասխանողներից հոգուտ հայցվորի բռնագանձվել է 92.766,4 ՀՀ դրամ՝ որպես դատական ծախս:

Վերաքննիչ դատարանի 2017 թվականի մարտի 17-ի որոշմամբ պատասխանողներ Ա.Մարտիրոսյանի և <<Մուրադիկ>> ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարվել է. Առաջին աստյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել է: Սկզբնական հայցը բավարարվել է մասնակիորեն. Ա.Մարտիրոսյանից և <<Մուրադիկ>> ՍՊԸ-ից հոգուտ <<Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո>> իրավաբանական անձանց միության բռնագանձվել է 388.250 ՀՀ դրամ՝ որպես հատուցված վնասի գումար:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2017 թվականի ապրիլի 14-ին փոստի միջոցով վճռաբեկ բողոք է բերել Բյուրոյի գործադիր տնօրենի Ժամանակավոր պաշտոնակատար Ա.Նազարյանը /բողոքը մուտք է գործել Գերագույն դատարան 21.04.2017թ./:

Վճռաբեկ բողոքը և քաղաքացիական գործը դատարանի կազմին է հանձնվել 2017 թվականի մայիսի 4-ին:

Գերագույն դատարանի 2017 թվականի մայիսի 19-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել պատասխանողներ <<Մուրադիկ>> ՍՊԸ և Ա.Մարտիրոսյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի, 229-րդ հոդվածի 1-ին մասի, 230-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ և 362-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Մեջբերելով իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ և 362-րդ հոդվածների բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ պատասխանողները, որպես վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորում, նշել են Առաջին աստյանի դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի 1-ին մասի և 362-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումները, գտնելով, որ պարտապանների համապարտ պարտականության դեպքում դատարանը պարտավոր էր պարտավորությունը դնել ոչ միայն իրենց վրա, այլև բոլոր համապարտ պարտապանների վրա:

Ըստ բողոքի՝ պատասխանողները վերաքննիչ բողոքում, համաձայնվելով դատարանի վճռին, բողոքում էին միայն այն բանի համար, որ ավտովթարի մեկ այլ մեղավոր Ռոբերտ Բաղդասարյանի վրա որևէ պարտավորություն չի դրվել, մինչդեռ

վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Ռ.Բաղդասարյանի վրա պարտավորություն դնելու կամ չդնելու հարցը որևէ առնչություն չունի Բյուրոյի պահանջի հետ, քանի որ վերը նշված իրավանորմերում խոսքը գնում է համապարտ պատասխանատվության և համապարտ պարտականության մասին:

Ըստ բողոքաբերի՝ եթե պատասխանողները չեն վիճարկում, որ իրենք Բյուրոյի համապարտ պարտապաններն են, նրանք չեն կարող վիճարկել, որ Բյուրոն նրանցից իրավունք չունի պահանջելու լրիվ ծավալով պարտքի կատարում, քանի որ պարտականության համապարտության պայմաններում՝ քաղաքացիական օրենսգիրքը Բյուրոյին իրավունք է վերապահում որոշել, թե որ համապարտ պարտապանից /պարտապաններից/ և ինչ ծավալով կարող է պահանջել պարտքի կատարում:

Բողոքաբերը, վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ մասը, հանգել է այն հետևության, որ պատասխանողներն ոչ թե պետք է վիճարկեն դատարանի վճիռը, այլ պետք է Բյուրոյի նկատմամբ իրենց համապարտ պարտավորությունը կատարելուց հետո պահանջ ներկայացնեն մյուս համապարտ պարտապանին:

Բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննության սահմաններից, անհիմն է համարել պատճառված վնասը լրիվությամբ պատասխանողներից գանձելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը և քննարկման առարկա դարձրել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը, «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական հատուցումների վճարման» Բյուրոյի RL 1-017 Կանոնները, որոնց հետ կապված վերաքննիչ բողոքում որևէ հիմք և հիմնավորում առկա չէր: Նշված Կանոնները ընդհանրապես կիրառելի չեն Բյուրոյի նկատմամբ: Վերաքննիչ բողոքում նաև առկա չէր պատահարին մասնակից վարորդների մեղավորության բաշխման հարցի վերաբերյալ որևէ հիմք և հիմնավորում:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննության սահմաններից, ոչ միայն խախտել է ընթացակարգային պահանջները, ԼՂՀ Սահմանադրությունը և օրենքները, այլև բովանդակային առումով Բյուրոյին գրկել է իր հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը /պատասխան/ ներկայացնելու իրավունքից /Բյուրոն պատասխան է ներկայացրել միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ/: Բողոքի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը՝ հնարավորություն չի տվել Բյուրոյին օգտվել իր դատավարական իրավունքից՝ խախտելով նաև կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ Գերագույն դատարանի որոշումը կարող է ունենալ էական նշանակություն օրենքով վերաքննության սահմաններին վերաբերող պահանջների միատեսակ կիրառության համար, և որ թույլ է տրվել դատական սխալ, որը ծանր հետևանք է առաջացրել Բյուրոյի համար:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2017 թվականի մարտի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի վճռին, ինչպես նաև անդրադառնալ դատական ծախսերի բաշխմանը:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքի պատասխանում, առարկելով վճռաբեկ բողոքի դեմ, պատասխանողները նշել են, որ հայցվորի կողմից բերված բողոքն ակնհայտ անհիմն է,

քանի որ վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ժամանակ նյութական և դատավարական նորմերի խախտում թույլ չի տրվել և դատաքննությամբ ձեռք բերված ու հիմնավորված ապացույցների հիման վրա կայացվել է օրինական դատական ակտ: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն ապացուցված ու հիմնավորված է գտել, որ ավտոմեքենայի սեփականատեր Էդգար Ղալայանին պատճառվել է 776.500 ՀՀ դրամի չափով նյութական վնաս, որն առաջացել է վթարի մեջ մեղավոր վարորդներ Ա.Մարտիրոսյանի և Ռ.Բաղդասարյանի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով, և Բյուրոն՝ վնաս պատճառող պատասխանողի, «Մուրադիկ» ՍՊԸ-ի և Ռ.Բաղդասարյանի հանդեպ ձեռք է բերել հատուցած վնասի՝ 776.500 ՀՀ դրամ գումարի մասով հետադարձ պահանջի իրավունք:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 2012թ. սեպտեմբերի 25-ին ժամը 11:45-ի սահմաններում սեփականության իրավունքով «ՄՈՒԲԱԴԻԿ» ՍՊԸ-ին պատկանող և Ապրես Մարտիրոսյանի վարած «Կամազ-5320» մակնիշի 173 LU 23 պետհամարանիշի ավտոտրանսպորտային միջոցը /այսուհետ՝ նաև Կամազ/ Ստեփանակերտ - Կարմիր Շուկա ավտոճանապարհի 18-րդ կմ-ի հատվածում բախվել է սեփականության իրավունքով Էդգար Ղալայանին պատկանող և Ռոբերտ Բաղդասարյանի կողմից վարած «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 21ՍԼ886 պետհամարանիշի ավտոմեքենային, որն էլ, ինքնաբերաբար հետընթաց շարժվելով, ընկել է ձորը /հատոր 1-ին գ.թ.12/:

2. Պատահարի պահին Կամազի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքված չի եղել:

3. 26.11.2012թ. համար 13585 վճարման հանձնարարականի համաձայն՝ Բյուրոյի կողմից «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 21ՍԼ886 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի սեփականատեր Է.Ղալայանին վճարվել է 1.104.000 ՀՀ դրամ՝ որպես վնասի հատուցում /հատոր 1-ին գ.թ.34/:

4. Ըստ «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի կողմից 10.07.2013թ. կատարված դատաավտոտեխնիկական ու դատաապրանքագիտական և «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 26.10.2016թ. կատարված կրկնակի համալիր դատաավտոտեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննությունների եզրակացությունների համաձայն՝ «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայի սեփականատեր Էդգար Ղալայանին պատճառվել է 776.500 ՀՀ դրամի չափով նյութական վնաս, վնասի առաջացման հարցում առկա է և՛ պատասխանող Ապրես Մարտիրոսյանի, և՛ երրորդ անձ Ռոբերտ Բաղդասարյանի մեղքը /հատոր 1-ին գ.թ.178-187, հատոր 3-րդ գ.թ.4-7/:

5. Առաջին աստիճանի դատարանը, գտնելով, որ «Մուրադիկ» ՍՊԸ և երկու մեքենաների վարորդները կրում են համապարտ պատասխանատվություն, և Բյուրոն պատասխանողների և երրորդ անձ Ռոբերտ Բաղդասարյանի հանդեպ ձեռք է բերել 776.500 ՀՀ դրամ գումարի մասով հետադարձ պահանջի իրավունք, և որ հայցը ներկայացվել է միայն պատասխանողների դեմ, նշված գումարը բռնագանձել է պատասխանողներից: Իսկ Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ վարորդների մեղքի աստիճանը հավասար է, որոշել է պատասխանողներից հոգուտ Բյուրոյի բռնագանձել պատճառված վնասի միայն 50 տոկոսը՝ 388.250 ՀՀ դրամը:

6. Սույն գործով դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն սկզբնական հայցի մասով:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, գործով թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Գերագույն դատարանը գտնում է, որ Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գործերի քննության արդյունավետության /մասնավորապես դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության/, վերաքննության սահմանների, համապարտության ինստիտուտի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն. որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունը իրավաբանական անձանց նկատմամբ» վերտառությամբ 74-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքն ամրագրված է ԼՂՀ դատական օրենսգրքի 16-րդ հոդվածում, որտեղ կարևորվում են գործի դատական քննության նախապատրաստական փուլը և ողջամիտ ժամկետներում գործի քննության իրականացումը:

ԼՂՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, միջազգային իրավունքի նորմերին և օրենքներին համապատասխան:

Գերագույն դատարանը փաստում է, որ դատարանի դատական ակտն անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքն առանց բավարարման է թողնվում այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի դատական ակտը օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, իսկ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական չեն գործի համար, այսինքն՝ դատարանը ճիշտ է մեկնաբանել և կիրառել նյութական և դատավարական իրավունքի նորմերը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե, արդյոք, Վերաքննիչ դատարանի կողմից գործի

քննության ընթացքում թու՞յլ են տրվել իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք սահմանափակել են բողոք բերած իրավաբանական անձի իրավունքները և հիմք են հանդիսանում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ բողոքը բերվել է դատական ակտի վերանայման հետևյալ հիմքերով. 1/ Վերաքննիչ դատարանը խախտել է վերաքննության սահմաններին, կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքներին վերաբերող սահմանադրական և քաղաքացիական դատավարության նորմերի պահանջները, 2/ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել համապարտ պարտականության ինստիտուտի վերաբերյալ քաղաքացիական օրենսդրության նորմերը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ դատարանի վճիռը լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, նույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս: Առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին հոդվածի 3-րդ մաս/:

Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշմանը վերաբերող ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 121.1-ին հոդվածով սահմանված պահանջները: Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի ... , գ. այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, և վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցներին:..., ե. այն փաստերը, որոնք հաստատվել է վերաքննիչ դատարանը...

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ <<1.Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: 2. Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:>>:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանի առջև բոլոր դեպքերում խնդիր է դրված առավելագույնս պարզել գործի իրական հանգամանքները, կողմերի իրավունքները ու պարտականությունները, փաստերի և իրավունքների՝ իրականությանը համընկնելը և կայացնել դատարանում պարզված հանգամանքներին համապատասխան դատական ակտ: Գերագույն դատարանը փաստում է, որ այդ խնդիրը լուծելու համար դատարանները պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար, որպեսզի ապահովվի, պաշտպանվի քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության իրավունքները և ազատությունները: Գերագույն

դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարանները պետք է նկատի ունենան, որ յուրաքանչյուր գործ իր բնույթով, փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար դատարանի պարտականությունների մեջ է մտնում որոշելը, թե տվյալ գործով ինչ օրենքներ են ենթակա կիրառման և ինչպես պետք է դրանք կիրառվեն:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով իրավական նորմի կիրառումը միշտ կապված է նորմերի մեկնաբանության հետ, այսինքն՝ դատարանի հատուկ գործառնության հետ, որը կապված է կիրառման ենթակա նորմի իմաստի բացահայտման /պարզաբանման/ հետ: Իրավունքի բացի դեպքում օգտագործվում է իրավունքի կիրառման գուգադրության կարգը: Դա իրավունքի ընդհանուր սկզբունքների և իմաստի հիման վրա կոնկրետ գործի վերաբերյալ որոշման ընդունումն է: Այդ հարցին Գերագույն դատարանն անդրադարձել է իր նաև նախկինում կայացրած որոշման մեջ /տես՝ ԸԻԴ 0006/04/15թ. ըստ հայցի ԼՂՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ընդդեմ <<Նիկոլ>> ՍՊԸ քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 31.01.2017թ. որոշումը/: Գերագույն դատարանն արձանագրել է, որ հաճախ դատարաններն իրավամբ կիրառում են օրենքի գուգադրությունը, որը ենթադրում է կոնկրետ գործի լուծումն այնպիսի իրավական նորմի հիման վրա, որը նախատեսված է ոչ թե տվյալ, այլ նման դեպքերի համար: Այսինքն՝ տվյալ հարաբերությունը կիրառվող նորմով անմիջապես չի կարգավորվում, այն կարգավորվում է այլ, բայց նույնանման հարաբերություններ:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող են լինել ինչպես գործարքները, այնպես էլ ոչ իրավաչափ գործողությունները /դեղիկոսները/, այն է՝ վնաս պատճառելու հետևանքով առաջացած իրավաբանական փաստերը:

Այսպես՝ նախկինում և ներկայումս գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ /ներկայումս 1061-րդ/ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտավորությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի /ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդված/ 1-ին մասի համաձայն՝ վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տուժողի դիմումի հիման վրա և հօգուտ նրա, դատարանն իրավունք ունի համատեղ վնաս պատճառած անձանց վրա պատասխանատվություն դնել մասերով՝ դրանք որոշելով նույն օրենսգրքի 1074 հոդվածի /ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի 1079-րդ հոդված/ 2-րդ կետով նախատեսված կանոններին համապատասխան:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝

<<1. Պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

2. Համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից:

3. Համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:>>

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի /ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի 1079-րդ հոդված/ 2-րդ մասի համաձայն՝ համատեղ պատճառած վնասը հատուցած վնաս պատճառողն իրավունք ունի մյուս վնաս պատճառողներից պահանջել տուժողին վճարված հատուցման բաժինը՝ այդ վնասը պատճառողների մեղքի աստիճանին համապատասխանող չափով: Մեղքի աստիճանը որոշելու անհնարինության դեպքում բաժինները ճանաչվում են հավասար:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ <<Պարտատիրոջ՝ այլ անձի անցնող իրավունքների ծավալը>> վերտառությամբ 399-րդ հոդվածի համաձայն՝ սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:...

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> ԼՂՀ օրենքի /այսուհետ՝ ԱՊՊԱ օրենք/ 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԱՊՊԱ օրենքի հիմնական խնդիրներն են 1/ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանության երաշխավորումը, 2/ ...:

ԱՊՊԱ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բյուրոյի գործունեության նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոն ԱՊՊԱ ոլորտում նպաստում է իր անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությանը, կարգավորում ու վերահսկում է նրանց գործունեությունը, իր անդամ ապահովագրական ընկերությունների համար մշակում է մասնագիտական վարքագծի կանոններ:

ԱՊՊԱ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եթե վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր, ապա տուժած անձանց պատճառված վնասները հատուցում է Բյուրոն՝ Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բյուրոն, հատուցելով այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ առաջացած վնասը, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր՝ հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի և ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ, որոնք Բյուրոյի նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

ԱՊՊԱ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վնասը պատճառել են մի քանի անձինք, և հնարավոր չէ պարզել նրանցից յուրաքանչյուրի պատճառած վնասի չափը, ապա այդ անձինք /նրանց՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերությունները/ տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Ընդ

որում, սույն օրենքի 8-րդ հոդվածի դրույթները համապատասխան ապահովագրական ընկերությունների նկատմամբ կիրառվում են առանձին:

ԱՊՊԱ օրենքի՝ «Ապահովագրական գումարը և հատուցումը» վերտառությամբ 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տուժողի փաստացի կրած վնասները հատուցելու համար ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը հատուցում է վնաս պատճառողը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1066-րդ հոդվածի համաձայն: Տուժողի փաստացի կրած այն վնասները, որոնք հատուցման ենթակա չեն ԱՊՊԱ պայմանագրով /Բյուրոյի կողմից/, հատուցում է վնաս պատճառողը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

Բյուրոյի խորհրդի կողմից 17.12.2010թ. թիվ 36-Լ որոշմամբ հաստատված՝ «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական հատուցումների վճարման» RLI-017 կանոնների 21-րդ կետի համաձայն՝ ապահովագրական պատահարում տուժողի կամ տուժողի ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի ոչ դիտավորյալ մեղքի առկայության դեպքում /անձը համարվում է ապահովագրական պատահարի առաջացման մեջ ոչ դիտավորյալ մեղք ունեցող նաև այն դեպքում, եթե անհնար է պարզել ապահովագրական պատահարում նրա մեղավորության կամ անմեղության հարցը/ ապահովագրական պատահարում տուժողի մեղավորությունը գնահատվում է 50 տոկոսի չափով, եթե մեղավորության այլ աստիճան չի սահմանվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Վնասի հատուցման պահանջի իրավունքն ապահովադրից ապահովագրողին անցնելը /սուբրոգացիա/>» վերտառությամբ 1021-րդ հոդվածի /ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ/ 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին /ապահովագրված անձին/ պատճառված վնասից բխող նրա /կամ շահառուի/ պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: ...Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է ապահովադրի /ապահովագրված անձի, շահառուի/ և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

Վերոշարադրյալ իրավական նորմերի համադրված վերլուծության արդյունքում Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանողների և այլ անձանց՝ Բյուրոյի հատուցած վնասը վերջինիս վերադարձնելու պարտականության հարցը լուծելիս դատարաններին անհրաժեշտ է ղեկավարվել Արցախի Հանրապետության Մահմանադրության, ԱՊՊԱ օրենքի և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերով, նկատի ունենալով նաև իրավունքի գերակայության սկզբունքը: Քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող նորմերի նպատակն է ապահովել վնասի ամբողջական հատուցումը, և վերը նշված կարգավորումներն ուղղված են տուժողի /վնաս կրողի/ շահերի արդյունավետ պաշտպանությանը: Օրենսդիրը, նախատեսելով ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրական հատուցում իրականացրած ապահովագրողի պահանջի իրավունքը, միաժամանակ ամրագրել է այդ պահանջի իրավունքի իրականացման իրավական հիմքերը, մասնավորապես՝ այն, որ պահանջի իրավունք ձեռք բերած ապահովագրողի և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորվում են վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները սահմանող կանոններով, այսինքն՝ նախկինում գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ

գլխով /ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի 62-րդ գլխով/ սահմանված կանոններով: Իսկ Բյուրոն /կամ ապահովագրական ընկերությունը/ մեղավոր անձից իր կողմից վճարված գումարը հետ պահանջելու իրավունք է ձեռք բերում այն չափով, որքանով վերջինիս գործողություններով վնաս է պատճառվել:

Ինչպես հետևում է գործի նյութերից, Առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի վճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել միայն պատասխանողներ Ա.Մարտիրոսյանը և «Մուրադիկ» ՍՊԸ-ն, հետևաբար Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության ժամանակ որպես հիմք ընդունել է Առաջին աստիճանի դատարանում հաստատված՝ վերաքննիչ բողոքում չվիճարկված փաստերը, համաձայն որոնց՝ Էդգար Ղալայանին պատկանող մեքենային պատճառվել է 776.500 ՀՀ դրամի չափով նյութական վնաս, որն առաջացել է պատասխանող Ա.Մարտիրոսյանի և երրորդ անձ Ռ.Բաղդասարյանի մեղքով, Բյուրոն Է.Ղալայանին հատուցել է պատճառված վնասը՝ 1.104.000 ՀՀ դրամի չափով, և վնաս պատճառած պատասխանող Ա.Մարտիրոսյանի, առավել վտանգի աղբյուրի սեփականատեր «Մուրադիկ» ՍՊԸ-ի և երրորդ անձ Ռ.Բաղդասարյանի հանդեպ ձեռք բերել հետադարձ պահանջի իրավունք: Սակայն Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բեկանելով և փոփոխելով Առաջին աստիճանի դատարանի վճիռը, անտեսել է այն հանգամանքը, որ Բյուրոն հատուցում է կատարել Կամազի սեփականատիրոջ և վարորդի փոխարեն և տվյալ պահին իր իրավական կարգավիճակով փոխարինել է «Ֆորդ Տրանզիտ» ավտոմեքենայի վարորդին և սեփականատեր Է.Ղալայանին /որին պատասխանող Ա.Մարտիրոսյանի և երրորդ անձ Ռ.Բաղդասարյանի ոչ իրավաչափ գործողություններով պատճառվել է նյութական վնաս/, և որ Առաջին աստիճանի դատարանը, պարզելով, որ վնասի առաջացման մեջ մեղավոր է նաև երկրորդ ավտոմեքենայի վարորդը՝ Ռ.Բաղդասարյանը, որը գործով ներգրավված է որպես երրորդ անձ, համապատասխան միջոցներ չի ձեռնարկել նրա դատավարական կարգավիճակը հստակեցնելու համար:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, պատշաճ չգնահատելով կոնկրետ գործով ձևավորված իրավահարաբերությունները, Առաջին աստիճանի դատարանի վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու փոխարեն, առանց պատշաճ պատճառաբանության /գնահատական չտալով վերը նշված նորմերին և գործի հանգամանքներին/, որոշում է ընդունել կիսելու վնասի չափը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ Բյուրոն նյութական վնասի մասով հետադարձ պահանջի իրավունք ունի «Մուրադիկ» ՍՊԸ-ի, նրա վարորդ Ա.Մարտիրոսյանի և «Ֆորդ Տրանզիտ» ավտոմեքենայի վարորդ Ռ.Բաղդասարյանի նկատմամբ, միննույն ժամանակ ճիշտ չի կիրառել համապարտության պատասխանատվության վերաբերյալ նորմերը և պատճառված վնասի 50 տոկոսի չափը վերագրելով երրորդ անձ Ռ.Բաղդասարյանին, պատասխանողներից բռնագանձել է հոգուտ Բյուրոյի վնասի չափից 388.250 ՀՀ դրամը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ առավել վտանգի աղբյուրների փոխներգործության հետևանքով դրանց տերերին պատճառված վնասը հատուցվում է ընդհանուր հիմունքներով՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1061-րդ /նախկին օրենսգրքի 1058-րդ/ հոդվածով սահմանված կանոններով: Ըստ որում՝ եթե վնաս է կրում աղբյուրի տերերից մեկը մյուսի մեղքով, վերջինս պետք է հատուցի վնասը: Եթե երկու տերերն էլ մեղք են ունենում, վնասը հատուցվում է նրանց մեղքի աստիճանին համամասնորեն: Գերագույն դատարանը, սույն գործով մեկնաբանելով վնասի հատուցման վերաբերյալ իրավանորմերը, գտնում է, որ եթե ավտոմեքենաների տերերի ավտոմեքենաներին վնասը պատճառվել է ոչ թե իրենց, այլ ավտոմեքենաները վարած վարորդների մեղքով, և նրանք ունեն այդ վարորդների նկատմամբ հետադարձ

պահանջի /ռեգրեսի/ իրավունք, ապա նշված դեպքում նույնպես կիրառելի են ԱՊՊԱ օրենքով և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված համապարտ պարտականությունները կարգավորող նորմերը, բացառությամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ /նախկինում գործող օրենսգրքի 1073-րդ/ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Եվ քանի որ օրենսդրության նպատակն է ապահովել վնասի ամբողջական հատուցումը, հետևաբար չի արգելվում /չի կարող արգելվել/ քաղաքացու /իրավաբանական անձի/ հնարավորությունը վնասը հատուցելու պահանջ ներկայացնել անմիջապես վնաս պատճառողին և ավտոմեքենայի սեփականատերին /առավել վտանգի աղբյուրի տերին/, քանի որ վնասի ամբողջական հատուցման սկզբունքից ելնելով՝ հնարավոր են դեպքեր, երբ անմիջապես վնաս պատճառողը ավելի շատ գույք ունենա վնասի հատուցման համար, քան ավտոմեքենայի սեփականատերը: Հետևաբար, չի բացառվում վնասի հատուցման մասով որպես համապարտ պարտապաններ մեքենայի սեփականատիրոջը և վարորդին ներգրավելը, ինչն ուղղակի նախատեսված է ԱՊՊԱ օրենքով:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ համապարտ պատասխանատվության փոխարեն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել բաժնային պատասխանատվություն, բայց բաժնային պատասխանատվության փոխարեն համապարտ պատասխանատվություն կիրառվել չի կարող:

Գերագույն դատարանը գտնում է, որ քանի որ գործի նյութերից հետևում է, որ տուժողին պատճառված վնասի առաջացումը պայմանավորված էր երկու վարորդների մեղքով, հետևաբար երկրորդ վարորդը ևս այն անձն է, որի դեմ կարող է հարուցվել հայց:

Նման դեպքերի համար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը սահմանել է արդյունավետ կազմակերպական ընթացակարգ, որը նախատեսված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով, համաձայն որի՝ «1. Դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ, պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հարցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով: 2. Եթե հայցվորը համաձայն չէ իրեն ուրիշ անձով փոխարինելուն, ապա այդ անձը կարող է գործին մասնակցել որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ: 3. Եթե հայցվորը համաձայն չէ պատասխանողին ուրիշ անձով փոխարինելուն, դատարանը կարող է այդ անձին մասնակից դարձնել որպես երկրորդ պատասխանող:...»

Գերագույն դատարանը, գնահատման ենթարկելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի, 229-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման մասին բողոքի փաստարկները, գտնում է, որ դրանք մասնակիորեն են հիմնավոր՝ ելնելով հետևյալից.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ԼՂՀ դատական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերաքննության ինստիտուտը չի նվազեցնում առաջին ատյանի դատարանի՝ որպես արդարադատության հիմնական ինստիտուտի դերը և նշանակությունը: Վերաքննիչ դատարանը, որպես դատական համակարգի երկրորդ օղակ, հատկապես կարևոր դերակատարում ունի առաջին ատյանի դատարանում թույլ տված դատական սխալների ուղղման հարցում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոքի հիմքերը չեն կարող փոփոխվել, լրացվել բողոքի քննության ընթացքում:

Անդրադառնալով սույն վճռաբեկ բողոքում բարձրացված վերաքննության սահմանների հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերաքննության սահմաններն ամրագրված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու առաջին ատյանի դատարանի հաստատված փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանն ունի հստակ լիազորություններ /իրավասություններ/ և գործում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր լիազորություններից օգտվում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատավարական նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության սկզբունքների: Հետևաբար, պետք է տարբերակել վերաքննիչ բողոքի հիմքերը և այդ հիմքերին դատարանի կողմից գնահատական տալը: Գերագույն դատարանը փաստում է, որ քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերը որոշելը և կիրառելը դատարանի պարտականությունն է: Այլ ինդիք է, երբ դատարանը կարող է ոչ ճիշտ կիրառել կիրառման ենթակա օրենքը և առանց օրենքով նախատեսված դեպքերի դուրս

գալ վերաքննիչ բողոքի շրջանակներից և, խախտելով գործին մասնակցող կամ չմասնակցող մյուս անձանց իրավունքները, դատական վեճին լուծում տալ՝ հաշվի առնելով միայն բողոք բերողի շահերը: Նշված դեպքում վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է փոփոխման կամ բեկանման, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածների պահանջներից, համաձայն որոնց նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Ամփոփելով վերը շարադրվածը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքի փաստարկները՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման մասին հիմնավոր են, իսկ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ և 362-րդ հոդվածների պահանջներին հակասող դատական ակտ կայացնելու մասին հիմնավոր են մասնակիորեն, սակայն բավարար են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված Գերագույն դատարանի լիազորությունը, որի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանին անհրաժեշտ է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննել սկզբնական հայցը, որոշում կայացնել երրորդ անձ Ռ.Բաղդասարյանի դատավարական կարգավիճակը հստակեցնելու մասին, որպեսզի նա հնարավորություն ունենա արդյունավետ իրականացնելու իր իրավունքները և կատարելու իր դատավարական պարտականությունները, անհրաժեշտության դեպքում անդրադառնալ մեղքի աստիճանի չափին, գնահատել գործով ձեռք բերված ապացույցները սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո և կայացնել օրինական, հիմնավորված և պատճառաբանված վճիռ:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»: Սակայն քանի որ գործը վերջնական լուծում չի ստացել, դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. մարտի 17-ի որոշումը՝ սկզբնական հայցի մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ